ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՏԵՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

1. Խնդրի դրվածքը

Արդի աշխարհում ազգային մշակույթի անքակտելի բաղադրիչը և ազգերին բնորոշող իրողություններից մեկը ազգային խոհանոցն է՝ իրեն հատուկ կերակրատեսակներով: Ազգային կերակուրները զարգանում և փոփոխություններ են կրում տվյալ ազգի զարգացմանը զուգահեռ և ձեռք են բերում նոր բաղադրատոմսային առանձնահատկություններ և գաղտնիքներ, որոնք փոխանցվում են սերնդե սերունդ: Այդպիսով, ազգային խոհանոցն իր կերակրատեսակներով ուղղակի կապված է ազգային ինքնության հետ՝ ազդելով վերջինիս ձևավորման վրա:

Քանի որ ազգերը ներկայիս աշխարհում գտնվում են ամենօրյա սերտ շփումների մեջ, ազգային խոհանոցն առանձին վերցրած երկրի այն յուրահատկություններից է, որը նպաստում է նրա ճանաչելիության բարձրացմանը՝ դառնալով նաև երկրի զբոսաշրջային գրավչությունը բարձրացնող բղադրիչներից մեկը:

Ներկայումս ազգային խոհանոցներն իրենց կերակրատեսակներով հաճախ, երբեմն կամա թե ակամա, թիրախավորվում են այլ ազգերի կողմից, որոնք այդ կերակրատեսակները փորձում են վերագրել իրենց ազգային խոհանոցին՝ դրա համար հիմք ընդունելով իրենց կերակրատեսակների հետ նմանությունը կամ այլ իրողություններ:

Հայկական խոհանոցը, որը ձևավորվել է հազարամյակների ընթացքում, ստեղծել է իր բնակության միջավայրին բնորոշ կերակրատեսակներ՝ կապված այդ միջավայրի ֆլորային և ֆաունային բնորոշ բազմազանության հետ:

Հայկական ազգային խոհանոցի կերակրատեսակներից մի քանիսը «խորհրդանշական» կերակրատեսակներ են, որոնք պատրաստվում են հատուկ դեպքերում, այս կամ այն ազգային կամ ընտանեական տոնի առիթով, իսկ բազմաթիվներն էլ հայկական խոհանոցի առօրյա կերակուրներ են:

Մյուս կողմից, հայության շրջանում ի հայտ են եկել նաև կերակրատեսակներ՝ կապված հոգևոր-եկեղեցական ավանդույթների ու ծեսերի հետ և պատրաստվում են բացառապես այդ առիթներով:

2. Ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի նպատակը ազգային կերակրատեսակների ստեղծման ու ազգային տոների հետ դրանց փոխկապակցվածության ուսումնասիրությունն է և առանձին կերակրատեսակների բաղադրատոմսերի ամբողջացումը:

Ծրագրի արդյունավետ իրականացման համար խնդիր է դրված՝

2.1. ուսումնասիրել հայկական խոհանոցի ձևավորման պատմական ընթացքը,

2.2. առանձնացնել այսպես կոչված աշխարհիկ և հոգևոր-եկեղեցական (հին արմատներով) կերակրատեսակները, որոնցից առաջինները կապված են

աշխարհիկ կենցաղի և տոների, իսկ երկրորդները՝ հոգևոր ավանդույթների, տոների և ծեսերի հետ ու օգտագործվում են վերջիններիս ժամանակ,

2.3. ներկայացնել այժմ հայության շրջանում առավել տարածված և կիրառական ու շրջանառությունից աստիճանաբար դուրս եկող կերակրատեսակները և այդ գործընթացի պատճառները,

2.4. հետազոտել Հայաստանի քաղաքին և գյուղին բնորոշ կերակրատեսակները,

2.5. ձևավորել հայկական ազգային կերակրատեսակների բաղադրատոմսերի բազա,

2.6. պարզաբանել հայկական կերակրատեսակների զբոսաշրջային գրավչությունը,

2.7. ներկայացնել «վտանգված» կամ այլոց կողմից թիրախավորված՝ հայկական ազգային կերակրատեսակները, դրանց ծագումն ու առանձնահատկությունները՝ ցուցադրելով յուրացման փորձերի սնանկությունը։

3. Ծրագրի իրականացման ձևաչափը

3.1. Ծրագիրն իրականացվելու է 1-ամյա դրամաշնորհի տրամադրմամբ երկու մասնագետներից բաղկացած խմբի ձևավորման և իրականացվող ուսումնասիրությունների արդյունքների հրատարակման ու հանրայնացման ձևաչափով։

3.2. Հետազոտության ընթացքում և ավարտից հետո թեման ուսումնասիրող մասնագետները մասնակցելու են հետազոտության թեմայով հանրայնացմանը վերաբերող քննարկումներին։

4. Ծրագրի իրականացումը

Ծրագիրն իրականացվելու է հետևյալ հաջորդականությամբ.

4.1. հայկական ազգային կերակրատեսակներին և դրանց բաղադրատոմսերին նվիրված ուսումնասիրության ուղղությունների սահմանում, մրցույթի հրավերի պատրաստում և հրապարակում,

4.2. ֆինանսավորման համար ներկայացվող հայտերի համար բովանդակային և ֆինանսական պարտադիր չափորոշիչների սահմանում,

4.3. հայտերի փորձաքննության հիմքով ֆինանսավորման որոշման կայացում,

4.4. թեմայի իրականացում և արդյունքների ամփոփում։

5. Ծրագրի ժամանակային սահմանները և սկզբունքները

5.1. Ծրագրի իրականացման համար սահմանվում է 1 տարի ժամկետ, որի ընթացքում ֆինանսավորվելու է մրցութային հիմունքներով ընտրված 1 թեմա։ Ժամկետի ավարտին կատարված աշխատանքների ամփոփման արդյունքում կորոշվի ծրագիրը շարունակելու և հետազոտությունը խորացնելու հարցը։

5.2. Հետազոտության արդյունքները հիմք են հանդիսանալու ազգային ուտեստների վերաբերյալ հանրայնացման խոշոր ծրագրերի իրականացման համար (հանրամատչելի տեղեկատվություն, հանրային լայն մասնակցությամբ միջոցառումներ, տոնակատարությունների և այլն)։

6. Ակնկալվող վերջնարդյունքները

6.1. Ծրագրի ավարտին նախատեսվում է ունենալ ամփոփիչ հետազոտական տեքստ, որտեղ՝

6.1.1. ներկայացված է ամբողջական պատմական ակնարկ հայկական ազգային կերակրատեսակների ծագման և զարգացման վերաբերյալ,

6.1.2. բացահայտված է հայկական այս կամ այն կերակրատեսակի՝ ազգային տոների հետ փոխկապակցվածությունը,

6.1.3. ի մի են բերված Հայաստանի մարզերում, համայնքներում, քաղաքներում և գյուղերում պատրաստվող առօրյա և տոնական կերակրատեսակների հիմնական տեսակներն, բնութագրական ընդհանրություններն ու առանձնահատկությունները,

6.1.4. լուսաբանված են առանձին կերակրատեսակների պատրաստման հումքը և տեխնոլոգիական գործընթացները,

6.1.5. ի հայտ են բերված առանձին կերակրատեսակների՝ ծիսակարգային բնույթը ընտանեական կամ այլ կոլեկտիվ միջոցառումների ժամանակ,

6.1.6. բերված են տեղեկություններ «վտանգված» հայկական կերակրատեսակների մասին։

6.2. Ծրագրվում է ստանալ նաև հայկական առանձին կերակրատեսակների բաղադրատոմսերը ներկայացնող պատկերազարդ տեքստ՝ այդ կերակրատեսակների մասին պատմական, աշխարհագրական և բովանդակային տեղեկություններով։

7. Ծրագրի հեռանկարը

Ծրագրի հեռանկարը հայկական ազգային խոհանոցի և նրա կերակրատեսակների վերաբերյալ հենքային ուսումնասիրությունները խթանելու ճանապարհով ոլորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացումն է և նոր ուսումնասիրությունների խրախուսմամբ՝ հետազոտությունների խորացումն ու աստիճանական ամբողջացումը։

8. Ծրագրի ֆինանսավորումը

Ծրագիրը ֆինանսավորվելու է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տրամադրած դրամաշնորհով։